

բարձուժեանը այս ապօրինաւոր հրաժարականը, որչափ ցաւ մը չը պիտի պատճառէ հասարակութեան. ուրեմն կը հպրցունենք ամէն ողջամիտ Հայերու թէ՛ այսչափ ատեն. Ս. Պատրիարքը ու իւր ժողովը ինչ արդիւնք և օգուտ մը կրցին ցուցնել և ինչ դարման մը կրցին տանել Ազգային կենսատու վերքերու... չէ թէ՛ անձնական կիրքերով. Թորոսի և Կիրակոսի խնդիրներով զանդեցան՝ ու Ազգային օգտաւէտ խնդիրները անօգ և անօգական երեսի վրայ թողուցին: Ս. Պատրիարքի և իւր ժողովոյ այս հրաժարականը ապօրինաւոր ըլլալը կրկին կը պնդեմք. վասն զի այսչափ ատեն տարօրինակ խնդիրներով զբաղեցաւ, և ահա այս վայրկեանիս որ գործելու ժամն եկաւ՝ փութաց իւր հրաժեշտը կարդալ. այնպիսի հրաժեշտ մը՝ զորս ճշմարիտ Հայու մը՝ չէր վայլեր. Սահմանադրութիւնը իւր վերքերը չը դարմանած, Կաթողիկոսական խնդիրները ամբողջական վիճակով չէին լուծուած, Փրկչի պատուարանը իւր յետին թշուառութեան մէջ ինկած ատեն, Հրաժարական և հրաժեշտ կարդալը՝ յիշաւի մեծ ամօթ և նախատինք է. Ս. Պատրիարքի նաև իւր ժողովոյ, և Փրկչի Հոգաբարձութեան:

Հասարակութիւնը բան չունի նէ թող այսուհետեւ փութայ և անապարէ օր առաջ Սահմանադրական, անդորրական և յառաջադիմական կարգի կանոնն ու բարեկարգութիւնը տեսնել. ահաւա՛հիկ զարմանալի դէպք մը, դանաշտունք քառի մը, զորս Հայ հասարակութեան չէ թէ կեանք՝ այլ մահ կսպառնայ... և այլն:

Ինչ և է հրաժարական մընէր ժողովիդեան վրայ տեղաց, թէ օրինաւոր, թէ տարօրինակ. այս կետը ընթերցող Հայդը խղճին կը յանձնեմք... Ընդհանուր ժողովը եթէ՛ կորուստ մը չըլլաւ այն է ծեղրուկ. Պատրիարք մը. Հասարակութիւնը եթէ ցաւ մը զգաց՝ այն է խառն ժողովոյ տարօրինակ հրաժարումը. Փրկչի պատուարանը եթէ կրկին արտաւեր մը թափեց. այն է Հոգաբարձութեան անխղճութիւնը: — Սակայն Ազգը կրկին նոյն Հայ հասարակութիւնն է. Պատրիարքարանը կրկին

նոյն Պատրիարքարանն է. ժրկալոյդ քաֆի մը տարիներ և դարեր չը տներ. այլ վայրկեանէ մը և ժամէ մը կրկին կսկսի դադրիլ՝ ու անդորրական կերպարանք մը առնուլ, ահա ասանկ է նաև Ս. Պատրիարքի. և իւր ժողովոյ հրաժեշտը, հասարակութիւնը կարող է Պատրիարքի տեղ. փոխանորդ մը, իւր ժողովոյ տեղ ժողով մը ընտրել ու կրկին անգամ իւր գործերն շարունակել:

Հայեր՝ այսպիսի հրաժարականներ և հրաժեշտներ լսելով և տեսնելով. բնաւ երբէք վիատիլ պէտք չէ վասն զի Հայը՝ այսպիսի շատ Պատրիարքներ. և իւր ժողովներ տեսեր ու անցուցեր է, թող չըլլայ հրաժարեալ. Պ. Ս. Պատրիարք մը. ու իւր ժողով մը, թող ըլլայ նորնոր Պատրիարք մը ու իւր ժողով մը. դանդաղութիւն պէտք չէ, այլ միշտ զոհանքով և աշխատելու ջանք ընելու է.

— Հայեր՝ նա մանաւանդ Պօլսեցիներ. զէթ խղճացէք. և քաջ գիտցէք որ. երեք չորս միլիոն Հայու ակնարկը միշտ ձեր վրայ սևեռուած է: Կամ Հայու աչք զձեզ կը դիտեն. գաւառաբնակ Հայը, իւր Հայրասիրական յոյսը ձեր վրայ դրած է. Սահմանադրութեան և բարեկարգութեան յառաջադիմութիւնը ձեզմէ կախում ունի... Իսկ եթէ՛ դուք ալ՝ այսպիսի փափկիկ կետերու մէջ դանդաղ զրտնուիք. քաջ գիտցէք որ. երեք չորս միլիոն ժողովուրդի մը անեծքն ու նախատինքը ձեր գլխուն թափելէ զկնի. նախնի բարեբարաց. շիրիմները բացուելով. զձեզ վատ պիտի գոչեն. և հայրենասիրական հոգեով վառուած. աշխարհի և յաւիտենականութեան մէջ ալ, ձեզի դէմ դիմուած զօրութեամբ պիտի կռուին:

Պօլսեցի Հայեր. մի զարմանայք Էրիզայի այս մէկ քանի տողերուն վրայ. վասն զի Էրիզայն թեպէտև այսօր ձեր երկրի վրայ հիւր ըլլալով, որչափ որ պէտք չէ այս տողերը ձեզ կրկնելու. սակայն և այնպէս իր Հայրենասիրական սրբազան պարտքն է՝ որչափ որ իր սիրելի Հայրենիքէն հեռի կը գրտնուի. կրկին իր Հայրենեաց բարեխառնութեան կը փափաքի. վասն զի. Հայաստանն եղաւ առաջին անգամ իրեն կենսատու օդ մը շնորհը. սիրելի է

Հայու անունով ապրիլ . և Հայու անունով քամուռնական պսակը փառօք վայելիլ .

Կը կրկնեմ խօսքս , Բիւզանդիոնի օգը ծծող , ու օտար կլիմայի մը տակ ապրող Հայեր . որչափ որ հայրենիքէ հեռի օտար աշխարհի մը օգը կընենր շրնչէք ու անոր հորիզօնին տակ կ'ապրիք , կրկին անգամ . Հայ էք , ուրեմն պէտք է Ձր քիբով և միաբանութեամբ Հայաստանը գրկէք և Հայու գործ տեսնելով . Թշուառ Հայաստանի արտասուաց փաթիլները սրբէք . որ ճշմարիտ Հայուն միայն կը վայելէ : Օտար աշխարհի , փառքը , հարստութիւնը , յառաջադիմութիւնն ու բարեկարգութիւնը մեզի օգուտ չեն բերեր . Օտար ազգաց սէրն ու միաբանութիւնը , մեր Հայաստանի միութեան սիւն մը չեն կարող կանգնել . ինչպէս որ ամէն ազգի յառաջադիմութիւնը իւր հարազատ անհատներէ կախում ունենալը . անուրանալի ճշմարտութեամբ կրնամ խօստովանիլ . նոյնպէս ալ լսնաչառաբար կըսողո՞ղեմ որ Հայաստանի յառաջադիմութիւնն ալ իր անդրանիկ անհատներէն կախում ունի : Ուր զրմիաբանութիւն կայ , հոն կայ նպէս նախախնամութեան առատաշնորհ պարգևը :

ՀԱՅԿԱՆ ԵՍՄԱԿԱՆԻ

Գ. ԳՕԼԻՍ 8 Ապրիլ 1868

Ազնիւ Բարեկամ .

Ո՞ւր ես , ինչ եղար . ոչ ձայնդ կը լսուի և ոչ ալ դուն կը տեսնուիս , գիտեմ ինչպէս որ ես բեզի անշուշտ դու ալ ինձ այսպէս պիտի կրկնես ըսելով Թէ՛ միթէ դու ալ երկնի կապուտագոյն կամարի վերայէն դէպի կորստեան վիճը զլորուող կայծակն ես . միթէ դու ալ օտարի զաւկի նման չլայրկեան մը Հայ ապպրեզի վրայ գաղտագողի շրջող . և ժամանակին անիւներուն մթնոլորդը խորասուզող դիմակալող վիռուկ մետս , և հիմայ ո՞ր գիտէ դեպի ուր ճովահար եղար , որ ինչ բարեկամ ոչ . ես ինչ սահուն կայծակ մի

եմ . և ոչ ալ օտարին զաւակը , անշուշտ ես ալ Հայուհոյ մը արգանդէ ծնունդ և սնունդ առած ու Հայկայ աւազանին բով մեծցած Հայկազուն մի եմ . ոչ Թէ օտարին զաւկին նման Հայութիւնը ատող և վատաբանող ճիւղի մը թուն եմ , այլ նոյն իսկ Հայք արիւն . Հայու սիրտ և Հայու ոգի կրող ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՅԱՆԻ . եմ . անշուշտ ես ալ աչք ունիմ , տեսնելու և նկարագրելու . լեզու ունիմ խօսելու և թոթովելու . ձեռք ունիմ շոշափելու և գործելու , տկար գրիչ մ'ունիմ շատ քիչ արգարու թեամբ և իրաւամբ յօդուածներ գրելով օրագիրներ լեցնելու . ով կարող է խղճի և մտաց . սկզբմանց և գրչի իրաւանց վրայ բռնանալով գաղափարները ու համոզումները խղղել . . . սակայն և ինչպէս խղղել . այն որ նախախնամական առատաշնորհ պարգևներէն մինը կոչուած է . ով կարող է արեգական շառաւիղները բնութեան հորիզոնին վրայ խափանել , այն որ տիեզերական լոյս մը ցոլացնելու համար ի բնութենէ սահմանուած է . ով կարող է ժամլոյ ազատութիւնը սոսկական բովի մը մէջ սահմանափակելով հասարակութեան իրաւունքը ոտքի տակ առնել , ու մարդկային սեռը բռնաբարական շղթաներու առաջ կաշկանդել . մամուլն է մարդկային իրաւանց վահանը , բռնակալին սարսուռ մը ազդող սրդարութեան երկխայրի սուրբ , բնկերային յառաջադիմութեան համեմաւոր սնդակը , ազատութեան ճանկերէն զենքը . մարդկային պեռի ճշմարիտ բարեկամը . ճիզվիթական մէքենայներուն ելքտրական Թելը . միջին դարու խաւարին ճշմարիտ լնյու . . . վերջապէս . Գումթեմպերկի անմահ և հրաշքաւոր գիւտը . անխիղճին չարաբանին և վնասարտին անհաշտ և դարանպկալ Թշնամին , ով կարող է ուրանալ մամլոյ բազմադիւն օգուտները . մամուլն է անշուշտ ընկերական աջաբարին բարեխառնութեան յոյսն ու լոյսը , ինչպէս որ գարունը բնական աշխարհին քաղձրիկ պմաղ մը կաւետէ , նոյնպէս ալ մամուլը մարդկային յառաջադիմութեանը կեանք և ազատութիւն կը խոստանայ , սակայն ինչ կսեմ , որ՞ . դարբերու մէջ պիտի փնջօռեմք մամլոյ այս կեանքն ու ազատութիւնը . ինչու գիտես չիլտես զիս կը նախատես ,

չիս Կիշեր որ բոլոր աշխարհն նա մանաւանդ հոգա-
կաւորն Հիւփօ, ինչպէս այս վարդենիս մամուլոյ
ազատութեան հոգար զինու շարժմամբ կռուած
ատեն. մեր արդի Պատրիարքն ու Վարչութիւնը
զանի դեռ ճշել կը տքնին, չես յիշեր որ մեր
արդի Վարչութեան օրովը, երիտասարդ մը անպա-
տիւ, արգարախօսմը անիրաւ և ազգաներ մը անգա-
տամբ, կը կոչուի. ինչ կը զարմանան այնպէս
գրեթէ, միթէ չես գիտեր որ դեռ ես երեսուն և
հինգ տարեկան անձ մը չեմ, ըսել կուզեմ թէ Ընդ-
հանուր և իրաւ ժողովներուն անդամակցութեանն
ալ անարժան չեմ ուրիշն ինչու այսպիսի պարան-
գաներու մէջ գրչիս վրայ ստիպողական յանձնար մը
կը յաւելուս զիս դանդաղ կոչելով. այն ուր դուն ալ
դեռ ես այս օրուան Պատրիարքարանի բռնաբա-
րական ընթացքին վրայ դուռն նկարագրութեամբ
կը ցաւակցիս:

Այն սիրելի բարեկամք ինչո՞ւ կ'ծտիպես զիս խօ-
սելու և կրկնէ արտիկ վիրաւորելու. միթէ չես յի-
շեր որ միայն անձը երբ դեռ եւ ՅԾ տարեկան չէ և
ԿԾ ոչ, ալ բուժարկութեան համար տուրք չը կ'ընար
վճարել. ըսել է որ չեմ չէ, և Ազգային իրերով
վրայ ալ անաչաքապէս կրկնուի խօսելու, ճգաւոր-
ութեան չղենի. և իսկեմէ Գ. իսկոյն անուր բռնա-
կան շղթաներու տակ կը տուկայ, ան բարեկամ այն
ոգի անգամ մը ճշմարտութեան վահանը կուրծքը
դրած անպարտէ կը նետուի, պէտքէ որ կ'ընէ յապէս
և կ'ընէ յողմուի. անհաւատիկ սկզբունք մը գորս
միշտապարեան միակայն մտածութեամբ պնդում, ստոր
առաջին խոյս կուտայ. եթէ յողմութեանը դժուարին
է քարաւոր փոփոխութիւններով անպարտէին դեմ և
բռնութեանց տղմոյն մէջ պետքէ մեռնիք, այն Գ
մեծնիւրաց չէ թէ վաճառայ նման. Բարեկամ,
միտարմանար քոյսոր եթէ այս քրդորը կը կարկամ
ես, դու չգտնուիս չ'անս չգտնուիս իմ քաղաքները
ազատ են շատ մէ քիչ, գորդն ինչ անաչաք գրեթէ
վառն զի անպարտէ կը դիտեմ որ տղեկ թէ գէշ,
գրեջը միշտ քոր զենք մէ թէ և բռնութեան և մոլորա-
ծեան գլուխը մէկ հարուածով մը չի կտրէ. Գ զքե-
րեմ անտաման ազատութեանը դեռ ես ձեռք ձգել:

Ընկերական այս շինովի դրուժեան և իրարու հա-
կասական և անբնական օրինաց մէջ. արդեօք
ինչ ընել պետք է այս ԽՍՀՄ արին Կիշակին մէջ, լու-
ծիւնը մահ կտաւանայ, ազատ հրատարակութիւնը
պատիւ, կը լսես և ինչ կ'ընաս պատասխանել այս
դրութեան. ան հիկմայրի աւար մը այն անձին
համար. որ չը մեռած ճշմարտութեան պակար տես-
նել կը ցանկայ:

Զգե՛ք ուրեմն պատրիարքարանի կ'ընծու խն-
դիրները. թող քիչ մըն ալ Պատրիարքարանը ար-
դարութեան և ճշմարտութեան դեմ մաքաւի, որ-
պէս զի ինքնիրեն բոլոր ազգաց, նաեւ Հայ հասո-
րակութեան յետին անտիճանի ձաղը ու ծանակն
ըլլայ. և ազգային կենսատու խնդիրներն ալ այս-
պէս երեսի վրայ մնան. Իսկ մենք գրիչին հըրիչ
կենտուիս իրերով վրայ դարձնենք. քիչ մըն ալ
հասարակութիւնը այսչափ յետին թշուառութեան
վիին մէջ զլորող, և Հայութիւնը կ'իսամեռ դիակ մը
դարձնող այն աներկայ զօրութիւնը փնտենք.
Իմանենք և խեղճութիւններէ ազատ պահելու հա-
մար քննադատութիւններէ զոհեցանք. և բնաւ եր-
բեք այս նպատակն չը չեկինք:

Սիրելի բարեկամ լուծեանս վրայ կը ցաւիս.
բայց ինչ հարկ կայ ցաւելու, բնութիւնը իւր ան-
վրիպելի գարունը կաւետէ, ամէն մարդ ՎՍՓՈՐԻ
ափանց, գիւղերու, հրապարակներու և մարգագե-
տիներու վրայ բնութեան սքանչելի գեղեցկութիւնը
դիտելու համար, ամէն օր, շոգենաւներով, փոքրիկ
նաւակներով և ձիարշաւ կառքերով կ'երթնեն. ես
ալ մարդ եմ. ես ալ բնութեան գեղեցկութիւնը դի-
տելու կ'ընենք. Կամար, զոռաքնայի և ձրօմնմայ
տեցեր և հրապարակներ կ'իստուեն, սակայն ուր որ
պէ նրդամ, զրկին ազգային խնդիրները մտքես չեմ
հաներ, փանդի ինչպէս որ ուտել իմելը կեանք է,
նոյնպէս ալ ազգային խնդիրները ընկերական աշ-
խարհին հաւաստի ջախջ կը սեպուի, անկայն ինչ
օգիւտ որ այժմ այդ կողմերէ հեռի ԲՈՒՄԷԼԻ ՀԻ-
ՍՄԻ անիանց եղրը կը գտնուի, բնութեան սքան-
չելի տեսարանը կը դիտեմ. Թէ ինչպիսիւն և ծիրուն
ստիպաներու դայայիկովը կ'ընայիմ. երեկոյեան

արեւը մարդ չէ մտած, բարձրաբերձ բլրակներէն, ծաղկազգակ մարդէրու և երկրի քաղաքականութիւնը մայնուշակազգիւն իրապարտութիւնը առած վտակի մը եզրը կգրանդան: Թաշիք Պալիրի, Պաշիք Լիմանի, Փրատիլը Պալի, Շէհէտիք... Լալլի մարգագետնէն հրապարակներու վրայ, բնութեան և սիրոյ հրեշտակներու բազմութեան հանգիստեց կը ձևանամ, կը տեսնեմ գեղանի օրիորդներ, զոյգ զոյգ երիտասարդ պարոններու հեղ տերեւախիտ ծառերու շքին ներքև, Թիմեռնիկի պէս Եւրոպական բաղաբակրդութեան ճրագին չորս դին կը թռնակին, ժիրոյ և մտերմական խոստումներ կարտասանեն, անդին կը դառնամ կը նայիմ օրիորդ մը փափկիկ թևիկը երիտասարդի մը թևուն ոլորած նագելի քայլերով միայնակ կը շրջիլ, անդին կը նշմարեմ երիտասարդ մը ծառերու տակ թագուն, իսկ օրիորդ մը հեռիէն արձակ համարձակ մեկզմեկ դիմաւորելու համար կը թափառին, մեկ կողմէն Հայկական պարզութեան և ընտանեկութեան մէջ սնած օրիորդներ՝ իրենց ընտիր և սիրալիր սրտին զանձերը Հայկայ ճշմարիտ թռչուններու նուիրմուն համար յուսահատ կը հալիմ ու կը մային ու ան ու վառով իրենց սե օրիկանցունեն, միւս կողմէն պնծածներ, օտարմաներ Հայ կիներ՝ Եւրոպական հովեր կառնուն, Հայերու հետ կը խօսին, սակայն ի նախադիմ Հայութեան Յունական լեզուն կը թռնուին, իբր թէ նորեկ մօտայ մնալ ասիկայ եղած ըլլար, Եւրոպայի ընտիր շորեր կը հագնին, Եւրոպականին շարքը ու դիմակը միայն ունին, բայց հոտած սիրտեր, փտուն գլուխներ, անոգի մարմիններ են: Ահ բարեկամ, ինչ ըսեմ Հիւկօ մը չեմ որ այսպիսի նրանցիկ նկարագրութիւններով մատնաներ լեցունեմ Բարեկամ չը գիտնայ թէ ես ալ միամիտ անմասն օտարականի մը պէս կերակրի անոնց քչին, ինչ երջանիկ, լայրեան, ես ալ նոյն պահուն իմ Ազնիւ բար կամ և սիր լի Հրանտիս թևէն բռնած և իբր բնիկ գիւղացի կըթոնուի այն լայնածաւալ հրապարակներու վրայ, բուն գնաց բազմութիւնը շատցաւ և ալ ամեն մարդ սկսաւ պարել, կանչել, ուտել ու խմել, իսկ ես որ Հրանտիս թևին կռնած հեռի են

կը դիտեի, իսկոյն միտքս խաւ մը եկաւ, մտիկ ըրէ ըսի Հրանտ, դու դեռ ևս պատանի ես, և այսպիսի դէպքերու մէջ արանդարձ և անխորձ, մարդս պէտքէ որ այնպիսի վաղանցիկ վայրկեաններու մէջ, խռնեմ և ուշադրու ըլլայ: հիմա տես թէ Հայութիւնու Հայ կագունը, ինչպէս ալ սիրով և միաքանութեամբ կապիլինդը կըթոնուն, կը խաղան ու կը խնդան, ով կրնայ ըսել թէ Հայերը անմիտքան են, տեսարեմայ Հայկական հարցը խմբակը պահաւոր են Հայկայ թռչուններ— Թրատիլը ունիք Պ, Չարեհ, բայց ինչ մը տիկ ըրէ Վամը գիշերուան մեկը կանցնի, բաւական է, երգանք, վառիկի հիւր մեկը պէտքը չէ որ այս առտին քնիկներու նման գիշերաքնիկ ըլլայ ու ասդին անդին ման գայ, արդեն ժամանակը անցաւ և քորոս ալ անօթեցեմ Պարոն երգանք և քիչ մ'ալ գիշերը կը տեսուիմք — Շատ աղէկ բարեկամ ըսի ու սկսանք ճամբայ առնել դէպ ի տղէն զարկէնք դուռը և տանտերնիս բարեկամը անցանք արտորատ տեղանին զլուսը ճաշելու, տանտերնիս երկար առտեմէ ի վեր մեզ տեսած չէր, այնպիսի շնորհալի կերպով մը կը պատուէր զմեզ, որ բնաւ երբեք մոռնալիք չգնինք և միշտ ալ երախտապահու ենք, նոյն պահուն Վարժապետի փոխուելու չը փոխուելու: Հայերէն և Գաղիերէն կարգաւոր խնդիր մ'նչք ակամջիս հասաւ, հետաքրքրութեամբ քննեցի փունտեցի, և իմացայ որ տեղոյն Թաղական ազաները փոխուելով նորեկ Թաղականները դպրոցի յառաջագիւղութեան համար խնամքներ էն ցոյց տուեր, և որոշեր են այնպիսի դաստառ մը քերել, որով կարենանք ամէն մեկ պաշտօն առանձին ի զլուս հանելու — Եղբայր, յարեց Հրանտ, ինչ կա՞ք դպրոցի մը մէջ զիտեք քանի քանի պաշտօններ կայ, հալ կարող է առանձին յայսպիսի ծանր պաշտօնի յանձնառու ըլլալ, — Եղբայր ինչ կըսես — Թարեց օտար մը — Կարծեմ, այս անձը նորեկ Թաղականներէն ըլլալո՞ք եր — Դունի պաշտօն է, Հայկաբանութիւն, Գաղղիաբանութիւն, Չաղապորդութիւն և Կառավարութիւն պիտի ընէ: — Շատ աղէկ ըսաւ Պ. Հրանտ և սրտմտութեամբ տանտերնոյ դառնալով հարցուց, իմայանք որ նորնտիր Թաղական ազաները սըր-

և քիչ մը հանգիստ առնու՞մք . վասն զի այնօր Հիսարի բարձրաբերձ բլրակները մեզ շատ հոգնեցուցին . այս գիշեր հանգիստ ըլլանք, և վաղն ալ Խոսգիւղի Բանայիրը երթանք մանգալու . որպէս զի կարենաս իմանալ Թէ՛ որչափ հետաքրքրական մօտաներ . . . և այլ ինչ ուշադրութեան արժանի բաներ կայ . զորս զուրէն ամենևին ոչ լսած եմ , և ոչ գիշեր մը երազած — Ուրեմն գիշեր բարի և կըրկին ի տեսութիւն . — Երեւոյ բարով ըսի ու ես ալ շորերս հանելով իսկոյն անկողին մտայ :

Բարեկամդ
ԶԱՐԵՀ

ԱՐՁԱՊԱՆՔ ՅԱՌԱՋԱՆՈՅ

Ինձ ներկայացար քաղցր անունդ ձգած
Վարդի սեղ զնուծ Հրանդ մը հազած
Թէ չունենայի բուրիցդ ես ճաշակ
Կրնայիր պատշէլ զիս , դժբաղդ դիմակ
Ո՞հ կըլլայ հնար
Մոռնալ զսիրահար :

Արսու՛մ , հաղաչանք երբ արեւդ այրած
Առի զիս գայ մահու գիւղին ընկած
Ձայնիկդ խիստ սիրուն . դնուն էր նոնումներ
« Զեք երկնից , ըսի , արդար օրէնքներ
Ո՞հ կըլլայ հնար
Մոռնալ սիրահար :
Ձեզն արսասու՛մ . . . յիկէն միշտ ողբ , ուղեգրս անկրկն
Կրկին կը հոսեն ճիւղ , սիւնոյդ յանձնէիք
Դառն վեհերու միակիկ եմ տուի
Քանի , քաղցրիկ Սէրս . ես իմ կուրծքիս հուպ
Ո՞հ կըլլայ հնար
Մոռնալ զսիրահար :

Ձեռքս դաշկինակ , միշտ աչք պատուհան ,
Ձիկնս . . . անե՛ն մին լուրջ օտե՛րս քարնան .
Ոչ տոխակին երգ , աչ ձայն քնարին
Ձունին սփռփանք իմ տխուր արթին
Ո՞հ , կըլլայ հնար
Մոռնալ զսիրահար

Երբ հոս փայլէիր , իմ անուշ Վարդիկ
ՆԱՐԳԻՍ փառաց մէջ , էր միշտ երջանիկ
Արդ քանի՞ տեսող մնաց արագիւր
Կամայ մը դարձաւ սիրովդ վեհակիր
Ո՞հ կըլլայ հնար
Մոռնալ զսիրահար

Կեանքս ողջ աւերակ ես անուշ հեգ քուն
Ինձ աւանդ մնաց հաղաչանաց ճիւղն
Կուրծքս . դաշկինակ ալ ինձ հէտ օտու՛նակ
« Կամ շիրիմ , կերգէ , կամ Վարդս անուշակ
Ո՞հ կըլլայ հնար
Մոռնալ զսիրահար

Թէ Վարդիկն խամրած , քէ յոյս ալ մեռած
Բազկացդ սեղ շիրմանց գիւղին ըլլայ ինձ բաց
Թող մարի արեւս , ան վերջին բարեւս
Ձիրար չը տեսած , ճիւղ մեռնիմք քերեւս
Բաժանման չիք հար ,
Սիրդ այլոց մի՛ տար :
Բերա 1 Ապրիլ 1868 :

ՕՐԻՓՐԻ ՖԼՕՐԻԱ կամ ՆԱՐԿԻԶ

— Արքունի Բժշկական զարոցի 8 ընդհանուր կարգի աշակերտներէն . Պ . Պ . Վահունին պատուի կը համարի Հանդիսիս միջոցաւ հասարակութեան իմացընել որ . ամէն ուրբաթ օր ցերեկուան ժամը 6 էն ինչուան 9 . պատրաստ է Ազգային դպրոցներու մէջ . առ ի յառաջադիմութիւն Հայ մանկտոյն Բնագիտութեան դասախօսութիւն ընելու փափաքողը նամակաւ մը կրնան կարեւորութիւններն մեզ իմացընելով մանրամասնաբար տեղեկութիւններ նախաձեռնալ : Պ . Վահունին Թէ՛ իրեն դասերիւն մէջ ըրած յառաջադիմութիւնը . և Թէ զարոցիս մէջ ունեցած խոհեմ ու բարի բնագործութիւնը յիշալ այսպիսի սրանչիւր դասի մը դասախօսութեանը արժանի կընեն զինքը . և կը յուսանք որ յիշեալ Ազգայէր երիտասարդին մեզ յայտնած այս առաջարկութիւնը Ազգն ալ սիրով կընդունի և ընդ այնմ կը յարգէ զայն :

... Խմբագիր

Հանգեցր Զեր պատմական Հանդիսին մէջ անկին մը շնորհել մեր երկտող գրութեան, որով ըզմեզ խրախտապարտ պիտի կացնէր,

Առ Մեծ. Թաղական խորհուրդ Մամածիոյ Ս. Դէորգ Եկեղեցւոյ.

Պիտի կրնայ մի դէռ Մեծ խորհուրդը յանձնել Ազգային անմեղ մանկանց դաստիարակութիւնը շինաբարոյ ուսուցչի մը, որուն համար տրտունջներն օր քան զօր անելու վրայ են, հանգեցր մեզ պատասխանել:

Մնամ և այլն: ԱՇՈՏ

18 Ապրիլ. 1868 Ազգային Հիւանդանոց:

ՓՈԽՆԶ

— Ով որ կնիկի մը սիրահարուի կուզէ. պետքէ անոր սրտին երեւակայութեան կամ սնտախառնեանը դիմել. վասն զի կին մը այսպիսի շողմարարութեամբ կը խաբուի:

— Սիրահարեալները գողեքու նման ի սկզբան զգուշութիւններ կընեն. կսկիւրդ վերջը զանց կընեն և երբ չափազանցութեան մէջ գտնուին. խելոյն կը բռնուին:

— Երբ մարդկային կատարեալ գեղեցկութիւն մը կերակայեմ զայն ընդհանրապէս սիրականիդ վրայ նշմարել կը կնիկեմ:

— Այն կինը որ քորքը մերմել կորոշէ երեսաստորի մը առաջարկութիւնը ոչ բան թաւալան կը համարէ. իսկ այն որ բացատրութիւններ կուտայ. չստոյգ նշմարելու մը համոզմանն ու հաւանութեանը:

— Զատասիրտ կնոջ մը ամենէն վնասակար գործին իւր մահաբոյր լեզուով քան միմեզի մտաւարկով անոցի դն առնալով:

— Ով որ կրնայ մէջ փոփոխութիւնը սիրել. կործանութիւնը չի մարտնչի, սիրելի ըլլալը դեռ չի գիտեր:

— Անտարբերութեան մէջ կապրի այն ծանր որ դեռ տեսած չէ իր սիրելուն կիւր:

— Կին մը երբ իւր բնական գեղեցկութեան կը գրկուի. իր սիրոյն մէջ հապարտուն կը մնայ:

— Անտարբերութեանց ամենէն նուաստիւր. որոնց կրնայ ենթարկուիլ կին մը չի կրնար միտել զաղորդ անիտուն անտարբերութեան Զօրիոյցաւոր այս ծամուլայ քան միտաւարկով:

— Կրնայ զեռ երջանիկ վարելու վիճակ միտոյր և երբեք անոր սրտի գործերուն չը խառնուիլնէ:

— Սիրոյ մէջ անմեղութենէ զեւելի անցանք մէկ անջրպետ մը կայ որ է. հեշտակուն համոզող մը:

— Յետկան սիրոյ ամենին արդիւնութիւնը մէկ է. երկրորդը մարգարիտ մը. լծկ երկրորդը. արդիւնութիւնը:

— Արարիչը մարդս ստեղծելուն վրայ զըջցած է. բայց կինը ստեղծելուն վրայ ուրախ է:

— Կինը միշտ կորուստ կը կրէ սիրահարը իրեն բարեկամ ընելով. բայց կը շնորհ շատ բարեկամը իրեն սիրահարը ընտրելով:

— Օրիորդ մը իր պատշին սիրահարը կը մտոյր, ապերաշին կըլայ իր վարդանման կենաց զարնան մէջ:

— Օրիորդ մը երբ սիրոյ առաջին խոստումը կը զրծէ անմիջապէս կը զըջայ. և երկրորդ սիրոյ վրայ վատտարտութեամբ անտարբեր երեւակայութիւն մը կուենայ:

Զանազան Հեղինակներ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՌՆ

ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՐՀԻ

Ի Ս. Յ. ՀԻՍԱՐԵԱՆԷ

Այս վերնագրով Արամեան մարտի տպագրութեամբ ի լոյս ընծայեալ սքանչելի հեղինակութիւն մ'է, և որուն պատմական նկարագրութիւնները հետաքրքրական ըլլալուն, բաջայոյս եմք որ Ազգայինք ալ յիշեալ Արգոյ հեղինակին այս աշխատասիրութիւնն փառօք պսակելով, ուրիշ այլ և այլ հեղինակութիւններ և նարգմանութիւններ ևս Հայ գրականական ցանկին մէջ բազմացնելու պատմեալ տի ըլլան:

Կը ծախուի միայն ի գրանտակ Փարիզու Շէրիֆ Փաշա խան Թիւ 13. Գին 6 Ֆրանք:

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՅՍԵԱՆ

Կ. պօլիս, Ուզուն Զարը Շէրիֆ փաշա խան, Թիւ 13